ՏԵՂԵԿԱՆՔ
«ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 43. Դիվանագետի պարտականությունները

1. Դիվանագետի պարտականություններն են՝

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտականությունները.

2) մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները մշտապես կատարելագործելը.

3) իր իրավասությունների շրջանակում մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովելը.

4) իր լիազորությունների շրջանակներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելն ու օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ընթացք տալը.

5) պետական~~, ծառայողական~~ և օրենքով պահպանվող այլ գաղտնիքն օրենքով սահմանված կարգով պահպանելը, այդ թվում՝ դիվանագիտական ծառայության պաշտոնից ազատվելուց հետո՝ օրենքով նախատեսված ժամկետի ընթացքում.

6) դիվանագետի վարքագծի կանոնները պահպանելը:

Հոդված 44. Դիվանագիտական ծառայության հետ կապված սահմանափակումները

1. Դիվանագետն իրավունք չունի՝

1) կատարելու այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) խախտելու քաղաքական զսպվածության սկզբունքը՝ զբաղվելու կուսակցական գործունեությամբ կամ իր ծառայողական դիրքը կամ աշխատանքային միջոցներն

օգտագործելու կուսակցությունների կամ հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար կամ նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու կամ իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնելու.

4) խախտելու պետական~~, ծառայողական~~ կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու՝ օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ հրաժարվելու գաղտնիքին առնչվելու թույլտվության ձևակերպման սահմանված ընթացակարգն անցնելը.

5) ստանալու հոնորար իր ծառայողական պարտականությունների կատարումից բխող՝ իր նախապատրաստած հրապարակումների կամ ելույթների համար.

6) ոչ ծառայողական նպատակներով օգտագործելու դիվանագիտական ծառայության մարմնի նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքն ու ծառայողական տեղեկատվությունը.

7) իր ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ընդունելու նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

8) լինելու երրորդ անձանց ներկայացուցիչ այն մարմնի հետ կապված հարաբերություններում, որտեղ ինքը ծառայության մեջ է, կամ որն անմիջականորեն ենթակա է իրեն կամ անմիջականորեն վերահսկելի է իր կողմից:

2. Դիվանագետին արգելվում է համատեղ աշխատել մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձանց (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, վերջինիս զավակ, եղբայր և քույր) հետ, եթե նրանց ծառայությունը կապված է միմյանց նկատմամբ անմիջական ենթակայության կամ վերահսկողության հետ:

3. Դիվանագիտական ծառայության պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, դիվանագետը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման:

4. Դիվանագիտական ծառայողի լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող սույն հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետում նշված աշխատանքի հանդեպ:

5. Դիվանագետն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալ եկամուտներ: